

Կանխագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՅՈՐԴ ԿԱՅՈՐԴԱՆՈՒ



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Թիֆ 7



ՏՄԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԻՍ هانراکيداق HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعہ علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 7 || 15 ՓԵՏՐՈՒԱՐ 1903



ՏՂԵԿԻՆ

ԼԱՅԸ

Զմեռն եկաւ, ձիւն կը տեղայ
Տղայք նստին կրակին շուրջ,
Սակալն դուրսը, մի հեզ տղայ
Ցուրտն որքան կը դողդղայ:

Գլուխը բաց, ոտքը բռնակ,
Եւ հանդերձներն պատառ պատառ
Քայլամուտը սա խեղճ մանկի՞կ,
Որուն աւա՛ղ, մայրիկն ալ չիք:

Պատանք եղաւ ձիւնը երկրին
Երկինք խոժոռ, սեւեր հազաւ,
Խեղճ մանուկը արտասուագին
Մայրը կ'ողբար իր կաթոգին:

Մի քարեփոք կին մեծասուն
Խեղճ տղեկին տեսաւ արցունք,
Հարցուց անոր «Որդեակ սիրուն»,
«Ինչո՞ւ կուշաւ, ի՞նչ կուզես դուն»:

* * *

«Եկո՛ւր, մեր տուն ես քեզ համար,
Տուն, կերակուր, հանդերձ ունիմ»:
Մանկիկն հարցուց ձայնով սկար,
— Ունի՛ս հաւել ինձ համար մայր »:

ԱԳԻԻԼԻՆԷ



ՏԱՐԱԲԱՒՏ ԵՂԲԱՅՐԱԿՑԻՍ

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վերջալոյս չէ, այլ՝ յաւիտեանական գիշեր

Վերջալոյս մը կը հասնի լուս՝ հոգւոյս մէջ,
 Եւ որու հետ
 Ծուէն ծուէն գուցէ անհետ
 Յնդին իսպառ վառ բաղանջներս տալիս էս:
 Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

Հո՛յլ հո՛յլ յիշատակներէն, ո՛ր մէկն ըսեմ ողբացեալ ընկերս,
 դժբա՛խտ գրագէտ, դժբա՛խտ բանասէր, թշուա՛ռ ուսուցիչ, թըշ-
 ուա՛ռ հայր: Թերթերը գուժեցին « վաղահաս » մահդ, բայց ո՞վ
 զգաց այն շանթի հարուածը իր հոգիին խորքը, ո՞վ զգաց յաւի-
 տեանական կորուստի մը քստմնելի ցնցումը, ո՞վ զգաց անհղ եղբեր-
 գութեան հնչումը իր եսին մէջ: Խանդավառ սիրով քսանըվեց
 գարուններ ողջունած էիր, ո՞վ խլեց ձեռքէդ ապագայ այն գա-
 րունները որոնք յղի էին հեղինակութիւններու յոյսերով: Աւա՛ղ,
 մահը՝ տիեզերքի այդ չարաշուք վհուկը, հեգնական ժպիտով մը
 կը տանի՛ յոյսերդ, բայց ո՞ւր — Գերեզման: Արդեօք ի՞նչ դժո-
 խային սարսափով լեցուեցար « դժխեմ » (այս բառը շատ կը գոր-
 ծածէր Դպրեվանքին մէջ) մահուան ճիրաններուն տակ, որուն ա-
 հաբեր սարսուռը Տանդէի Դժոխքը կարդացած ատեննիս միասին
 զգացինք ու երգեցինք: Սակայն դուն այժմիկ խիստ բախտին
 հրամանին անսալով կը հեռանաս ինէ, Հովերի, Հեսիոտի, Վիր-
 գիլիոսի, Տանթէի ու Միլտոնի երգած աշխարհը. հոն են բոլոր
 աննշան արարածները և, որ գլխաւորն է, մեծ մարդիկ, այ-
 սինքն մարդոց անմահները. բայց դուն չնախանձեցար, երկրէն ի
 սպառ բաժնուիլ չուզելով, ողբացիր « վայրկեան մը », « Թաքուն
 խորանը », « Զութակը » և դեռ բազմաթիւ անտիպ քերթուած-
 ներ, որոնք սրտիդ ու կեանքիդ մշտնջենական երգեցիկ արձան-
 ներն են, « Կեանք », « Սէր » մրմնջող, թէ՛ արշալոյսին եւ թէ՛
 վերջալոյսին, իսկ խաւարչտին դանդիւի՞ն մէջ — չե՛մ գիտեր:
 Այսօր մահէն կը պահանջեմ կեանքդ, այդ նորանշան ոսկե-
 գեղմը, որ չի հափափուիր խաբուսիկ ձեւերով, երկնքի լոյսերը

կը խլուրօն: է՛հ, պատրանքներու պատմութիւն մըն է որ կը բացուի իմ առջեւ, պատրանքներու, որոնց գուցէ ամբողջութիւնը զգացիր օրհասական ճիգերուդ մէջ: Ա՛խ, իցի՛ւ թէ սնաւիդ մօտ գտնուէի ծնրադիր ու հաւաքէի հոգիիդ հեծկտանքի երգերը, չքացող էութեանդ հո՛ւով ճառագայթները: Ճառագայթի սիրահարդ, ներքին ճառագայթդ կորսնցուցիր. աւա՛ղ: Տեսար Դանդիւռին սարսափը, զոր Լէօբարտի մը յոռետեսութեամբ երգած ենք, ո՞վ գիտէ ի՛նչ հոգեբանական յայտնութիւններ ունէիր մահուան անկողնիդ մէջ յառնող, ուր ունայնութիւնը կ'արձագանգէ, լեռներու կողքին հռնչող քամիին պէս, նորէն կ'ըսեմ, քսանըվեց փունջերով գեղազարդուած՝ անդո՛ւնդը իջնել, գտնելու համար այն աշխարհը, որ ունայնութիւն է: Գիտեմ, եթէ կարենայիր, անհունութիւնը թողնով աշխարհի գիրկ կը նետուէիր, ճիշդ այն հոգեհատորիդ պէս, որ մահդ լսելով, յաւէտ դժբախտ մօրը գիրկը ինկած է կականաբարձ, Գրական, իմաստասիրական ու կրօնական անխոնջ ընթերցումներուդ մէջ, մահ բառին անդնդային գաղտնիք մը պարունակելը հասկնալով, դաւանանք մը հաստատած էիր, դո՛ւն, քեզի համար: Բնութեան հանդէպ սքանչացող մըն էիր, բայց երբ շնորհադառնալով կը խոկայիր ունայնութեան վրայ, լանջի ու պաղպաղուն ճակտիդ վրայ անբացատրելի գայրուցքի մը խորշումները ցոյց կուտայիր: Աստենականին իրականութիւնը սկեպտիկ քերթողի մը տառապանքովը չէր որ կը ներբողէիր. ո՛չ, կեանքին՝ կեանքով վայելումը քու իմաստասիրական դրութիւնդ էր, այնպէս չէ՞. թէեւ կասկածի անշէջ մորենին ալ հրգեհած էր պատանեկան կեանքդ, սակայն լիալիր երիտասարդութեանդ մէջ այժմ՝ կեանքէն առ միշտ փակուող երազուն աչքերդ. միայն նիւթը՝ բնութիւնը տեսնել ուզեցին: Ահա՛. նիւթը քեզ ա՛յնքան սիրեց, որ իր գիրկը առաւ: Գի՛րկ մը որ Վէնիսի դիւթանքը չունի. յաւերժական մրաշի մը հանդիսաւոր բացումն է այն. ուր սիրելիներու աչքերը արցունքի փրփուրէն կ'այրին: Ո՞ր բարեկամդ կամ ճմարիտ ընկերդ դադաղիդ առջեւ անտարբեր կրնար մնալ. ո՞ր ուսուցիչդ վիժատառած աչքերով կրնար կարդալ բօթաբեր լրագիրները, ո՞ր ճմարիտ գրագէտը, բանասէրը, ուսուցիչը եւ որ աւելին է, ճմարիտ հայրը առանց հառաչելու կրնար լսել գութկանդ: Անմիսիթար մահդ, 1892—1895 Դպրեվանքի յիշատակներուդ բայլը անապատի մերկին պէս խառնիխուռն պատկերեց աչքիս առջին:

Այդ ընկերական կեանքին ո՞ր քաղցրութիւնը յիշեմ: Օրմանեան—Դուրեան չըջանի բեզուս դիւթանքը, այժմիկ մեր վիշտերն իսկ կը քաղցրացնէ. ո՞ւր են այն տարիները, Արմաշու ո՞ր ձո-

ըին մէջ անթեղուած են արդեօք, Արմաշու ո՞ր անտառին մէջ լուծ են : Գրական ու իմաստասիրական հատորներ կը վերծանէինք, բայց մեզի ուրիշ հատոր մը կը կախարդէր՝ Բնութիւնը, անոր համար բաժնուելով եղեւիններու, կլթիկներու, մայրիներու, նոճիկներու, ոսիկներու եւ այլ բազմատեսակ բուսական հարստութիւններու շուքերուն տակ քաշուած կը քնարերգէինք, եւ այդ կրճիմն ու կնճիռը լուծելու համար մատիտն ու թուղթը կը բաւէին մեզի : Այժմ ո՞ւր է գրիչդ : Մեր երգերը կը կարգայինք իրարու, թերեւս մեր հոգիին մէջ նկարելու համար մեծ կեանքը՝ Բնութիւնը, որ իր սեւ անկողինը Մահը, շատ կանուխ բացաւ քեզի, Գրիգոր . . . : Արմաշու ալիքաւոր լեռները, բացարձակապէս բանաստեղծական ձորերը, որոնց մէջ վերընծիւղուած վայրի երփներփն ծաղիկները կը ժողվէինք, Մայիս մեկի, Դպրեւանքի աւանդական դարնանատունը կատարելու ըզմանքով, զոր կամ Գեր. Ներսէս Վարդապետի ագարակը և կամ Աւանտուզի փերէն ասդին երկարաձգուող խորհրդաւոր ագարակին մէջ կը տօնախմբէինք. մայիսեան գառնակերոյթի տօնը, որ բնութեան զարթօնքին հռչակումն էր. ի՞նչ անրիժ խնդութեամբ կ'ըմբռնէինք, ոայլերու մէջ տեղաւորուելով վերջալոյսին դէպ ի վանք կը դիմէինք շարականներու տոհմիկ քաղցրութեամբ լեցնելով լեռն ու ձորը : Ա՛խ, այդ սայլակները մեզի կը յիշեցնէին Բուշքինի « Սայլակը », որ տխուր պատկերն է կեանքին, որուն խորտակումը լսեցիր օրհասիդ մէջ : Եղ՞ուկ քեզի. հէք Գրիգոր : Արմաշական յիշատակները, պահ մը զիս կը խարեն, օրօքելով զիս լեռներու եւ պէնտերու մէջ : Գրիգոր, կը յիշե՞ս լողալ սորվելու փորձերդ, որ կարծես քաջ լուզորդիս նախանձելով (՝) ծանծաղուտներու հոգը կը ճանկուտէիր : Այն անտառներու գոգը ինկած բիւրեղ անկողինը՝ Զիլի Կէօլը, մեր պատանեկութեան կանանչութիւնը դեռ կը պահէ իր երազուն ալեակներուն մէջ, որոնց ճայնին ի լուր Լամարդինէն, Հիւկոյէ, Միւսէէ, Արիոստոյէ, Թաստոյէ, Շէյքսբիրէ, Կէօթէէ, Շիլլէրէ, Հայնէէ հրաշակերտներ կը կարգայինք Պէքասի թեւերուն վրայ սլացած . մոլութիւննիս բանաստեղծութիւն կարդալ ու գրել էր, եւ յաճախի իմաստասիրական ու կրօնական, մատենագրական, քննադատական հատորներու գիրկ խորայոյզ կը մոռանայինք ճաշի զանգակն ալ : Մեր ընկերներուն մէջ իսկ Զոյիլն ու Արիսդարքը ի յայտ կուղային ստէպ նախանձարեկ : Ոգորեցանք ու պարտուեցան. այլ ի գո՛ւր. Կասալեան աղբիւրը՝ Լէթէի փոխուեցաւ Դեկտ. 18ին : Շա՛տ կարգացիր, շա՛տ ուսումնասիրեցիր, ինչո՞ւ — Անդո՞ւնդ մը լեցնելու համար : Պարապ բան է եղեր կարդալն ալ, գրելն ալ.

քանի որ անարգ հողին լայնափեռեկ որկորին կեր պիտի ըլլանք : Ներեցէ՛ք, դառն ու հաստոյր հարուածը զիս այսպէս կը ներշնչէր « Ունայնութիւն ունայնութեանց » : Սեւ զգեստներու անձուկ ու միստիկ աշխարհը չմտանք՝ ապրելու համար, եւ ոչ թէ ցուրտ հողը խածնելու, այն հողը՝ որ սատանին թուքովն է մկրտուած եւ մեր ալ դառն արցունքներովը սրբագործուած : Ճշմարտութիւններու ամէնէն ջախջախիչն ու բիրտը մահն է, որուն առջեւ ճակատագրական օրէնքով մը կը խոնարհի աշխարհ համօրէն, արցունքն ու վիշտը քաղելով դժնէատեսիլ փոսին գոգը : Ա՛խ, հոն ի՞նչ բանագործութեանց հանքեր կան : Պի՛րկ փակուած կախարդական մատանի մը, այսինքն քնարանին առջեւ, ցաւելէն ու լալէն զատ ի՞նչ կրնայ ընել անգօր միտքը, որուն թեւերը երկինքի ու երկրի ձգողական ու վանողական զօրութիւններ կաշկանդած են : Աւա՛ղ, Դպրեվանքի մէջ, « Յակոբայ սանդուղը » երգեցիր կիսամեայ գրական բեմական հանդէսի մը առթիւ, հասկըցա՞ր խաւարակուռ գաղտնիքը Յակովբեան սանդուղին . եթէ կայ, ուրեմն անոր սանդղամատներէն վերելակած ես այլ եւս . իրողութիւն թէ ստուքիւն, անըմբռնելիին կալուածին կը վերաբերին եւ ո՛չ թէ մահացուն : Արդեօք սարսուռ մը, քստմնում մը չե՞ն ըզգար թաւուտները, մեղրանոյշ ջուրերը ու մելանոյշ թաւ տունկերը : Թո՛ղ անոնք պահեն պատանեկան յիշատակդ . թո՛ղ Արմաշու խորերուն մէջ աճող անմոռուկին փոխարկուի հոգիդ, աննսե՛հ եղբայրս : Ա՛խ, սիրտդ զգացումներու գեղածիծաղ ծով մըն էր ցամքեցաւ : Կեանքդ յիշատակներու ծաղկածիր լճակ մըն էր, ցամքեցաւ : Աչակերտութիւնդ ուսուցիչներուդ փառքն էր, անհետացաւ . մտերմութիւնդ Սըվաղի խորը հարցուկի մը պէս լուռ քաշուած Յովհաննէս Նազարեանին ու իմ երջանկութիւնս էր, շիջաւ : Ա՛հ, այն ի՞նչ քրքիչներ կ'արձակէիր, Յովհաննէս Նազարեանին ծիծաղուն ու կատակարան ձեւաչարժումներուն վրայ, խընդալէն կը մարէինք : Է՛հ, պէ՞տք էր որ բերկրապատար կեանքդ դազաղի մը գարշելի դադաղին մէջ ամփոփուէր : Ծովու եզերքները նեղ զգացող երեւակայութիւնդ, պէ՞տք էր որ մեծ անձուկին գերեզմանին մէջ նետուէր, անգամ մըն ալ չծաղկելու համար : Սուգի ու արտօսրի, հաւաչանքի ու յուսահատութեան անուրջ մը չէ՛ որ հիւսուած է մեր առջեւ . այլ սեւ իրողութիւնը, որ է նոյն ինքն Մահը : Ի՞նչ է Մահը, — եթէ ոչ ունայնութիւնը բացատրելու համար ճակատագրային բառ մը, սարսափի մէջ ձուլուած եւ արցունքի մէջ ջրդեղուած :

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ

(Մնացեալն յաջորդ թիւով)

ՈՒՍՈՒՑԻՉՆ ՈՒ ԻՐ ԴԱՍԸ

Նման այն հռետորին որ բեմ ելնելէ առաջ իր խօսելիք ճառին յատակագիծը կը շինէ նախ եւ կը քանդակէ զայն իր մտքին մէջ, այնպէս պատրաստուած պէտք է ըլլայ ուսուցիչ մը՝ երբ դասարան մտնէ։ Պատրաստուած ըլլալ կը նշանակէ գիտնալ թէ ո՞ր կէզ կը մեկնի, ո՞ր կ'երթայ եւ ի՞նչ ճամբով կ'երթայ հոն։

Ա. ՈՐԿԻ կը մեկնի. — Ընդհանրապէս դաս մը կ'սկսի ներածութեամբ մը, որ արդէն աւանդուած նիւթերուն եւ նորին մէջ տեսակ մը միացման գիծ կարելի է անուանել։ Այս կերպով հինը նորին հետ պէտք է՝ այսպէս առած՝ զօդել եւ նախկին ծանօթութիւններուն վրայ՝ աւանդելի դասին հիմը դնել։ Ուսուցիչն այս նպատակն իրագործելու համար, ամէն անգամ պէտք է պզտիկ քաղ մը ընել տայ՝ իր աշակերտներուն ըմբռնումին եւ կամ ստացած ծանօթութիւններուն աստիճանը ճանչնալու համար։ Այս փոքր նախարանը աշխատանքին կը նմանի ջութակահարի մը՝ որ իր գործիքի լարերը պէտք եղած ներդաշնակութեան մէջ կը դնէ։ Անհրաժեշտ է որ տղան գիտնայ նախապէս թէ ի՞նչ բաներու վրայ պիտի խօսուի իրեն։

Բ. ՈՐԿԻ կ'երթայ. — Ամէն դաս պէտք է ունենայ յստակ եւ որոշ նպատակակէտ մը, վերջակէտ մը, եթէ կարելի է այսպէս ըսել։ Այն պարագային երբ ուսուցիչը կը հասնի այս վախճանին՝ դասը արդէն ինքնին վերջացած կը համարուի սկզբունքով։ Եթէ այս պարագան անուշադրութեան տրուի, աշակերտները տեսակ մը տարտամ անորոշութեան մէջ կը մնան եւ յաջորդ դասի պատրաստութիւնն ալ մեծ դժուարութեանց կը բաղխի։

Գ. Ի՞նչ նամբով կ'երթայ. — Այս խնդիրը խիստ կարեւոր է մանկավարժութեան մէջ, զի հոս է որ երեւան կուգան դասատուի մը ուսուցանելու կարողութիւնները։ Ամէն մարդու տրուած չէ պերճախօս ըլլալ եւ կամ այլ եւ այլ կանոններ կամ դժուարիմաց կէտեր յանպատրաստից յստակօրէն բացատրել. ահա այս պատճառաւ է որ ուսուցիչ մը պէտք է իր մտքին մէջ որոշ կերպով պատրաստէ իր դասին յատակագիծը եւ նոյն իսկ գրի առնէ զայն, եթէ հարկ տեսնուի. ասով առաջքը առնուած կ'ըլլայ այն անտեղիութիւններուն որք յառաջ կուգան երբ ան ստիպուած ըլլայ շուտ շուտ իր ակնարկը գրքին վրայ ձգելու։ Արդարեւ փորձուած է որ տղոց աչքին կը բարձրանայ ուսուցչի արժանիքը՝ երբ այս վերջինը առանց գրքին վրայ նայելու դիւրութեամբ բացատրէ խնդրին առարկայ եղող նիւթը։ Միւս կողմէն, սոյն մէթոտը գոր-

ծածեղով՝ աշակերտները շատ աւելի ուշադրութեամբ մտիկ կ'ընեն իր ըսածներուն :

Դասատու մը պէտք է ճոխ միտերք մը պատրաստէ օրինակներու, մեկնութիւններու, հրահանգներու, որք մանկավարժութեան մէջ *moyen insuisifs* կը կոչուին եւ կը ծառայեն իր ընդլայնած ճշմարտութիւնն ու տեսութիւնները առաւել գիւրութեամբ տղոց մտքին միջ տեղաւորելու : Պէտք է նաեւ որ խնամքով բացատրէ ան իր նիւթը եւ աշխատի գուշակել իր աշակերտներուն ունեցած դժուարութիւնները : Շատ անգամ ասոնք հասկցանք, կ'ըսեն, բայց դէմքերնին իսկ կը մատնէ որ լաւ ըմբռնած չեն ուսուցչին ըսածը : Ասոր առաջն առնելու համար՝ դասի ամբողջ տեսողութեան ատեն բոլոր աշակերտներն ալ զբաղած ըլլալու են : Դասատուն ուշադրութիւն ընելու է այն պարագային՝ երբ թանձրացեալէն վերացականին կ'անցնի, վասն զի գրեթէ միշտ այդ միջոցին է որ ուշադրութիւնը կը ցրուի : Մասնաւորեմ ընդհանուրին բարձրանալու աստիճանաւորութիւնը միշտ բաղդատութիւններով իրագործելու է, այս նպատակին համար ուսուցիչը իր տրամադրութեան տակ պէտք է ունենայ շօշափելի օրինակներ, ի մասնաւորի գործիքներ, նիւթին հետ առնչութիւն ունեցող առարկայներ, քարտէսներ, նկարներ, հաւաքածոյներ եւայլն :

Պէտք է աշխատի որ աշակերտը ինքն իրմէն հանէ եզրակացութիւնները եւ հասնի ընդհանուր գաղափարներուն. ապա թէ ոչ, դասը չէ յաջողած : Այս ընդհանուր գաղափարները քերականութեան մէջ կանոններն են, պատմութեան մէջ՝ դարաշրջաններու յատկանշանական կողմերը, գիտութեանց մէջ՝ դասակարգութիւնները եւայլն :

Այսպէս դասի մը բլանը կրնանք համառօտակի հետեւեալ կերպով կազմել :

1. Հինը նորին զօդել ,

2. Թանձրացեալ օրինակներով բացատրել ,

3. Վերացականին բարձրանալ , եւ

4. Ստացուած ծանօթութիւններէն առօրեայ կեանքի գործածուած օգտակար գիտելիքներ քաղել դասէն :

Ճշմարիտ է որ այս չորս կէտերը ամէն դասերու մէջ չեն գրտնուիր, եւ դասաւանդութեանց ամբողջ շարք մը երբեմն հազիւ կրնայ այս նպատակն իրագործել, բայց դասին ուղղութիւնը փափաքելի է որ միշտ այս բլանով ըլլայ :

Նաեւ պէտք չէ մոռնալ սա առածը. « Ի՛նչ՝ բայց ազէկ » :

ԱՐՄԷՆ ՅԱՐՉԱՏ

Վկայեալ Զուից. մանկավարժ. դպրոցէ

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՁ

21. Ունեցած դիրքիդ վրայ մի՛ հպարտանաւ

Փոքրիկ աղջիկ, ծնողքիդ ունեցած դիրքին վրայ մի՛ հպարտանաւ: Այս շատ կամ քիչ գեղեցիկ, քիչ կամ շատ փայլուն անուն մը չէ. այս պատճառով մը չէ ուրիշէ մ'աւելի բարձր, որ մարդու արժանիք կուտայ: Այս բան մը չի նշանակեր:

Ընտանիքի մը արժանիք տուողը, ունեցած ստակն ալ չէ այլ իր պատուաւորութիւնն է, անոր աշխատութեան սէրն է, անոր անդամներուն լաւ ընթացքն է:

Եթէ աշխատասէր եւ առաքինի ծնող ունենալու երջանկութիւնն ունիս, ուրախացիր ասոր վրայ, բայց ոչ ուրիշ բանի վրայ, որովհետեւ Աստուծոյ հրամանով մենք կը ծնինք աստ կամ անդ, գործաւորներու քով կամ երկրագործներու մէջ, վաճառականներու կամ ծառաներու քով եւ մենք չգիտենք թէ ինչո՞ւ համար այս դիրքին մէջ կը գտնուինք կամ այն դիրքին: Կը կրկնեմ, թէ պատիւն է, առաքինութիւնն է, եւ վարմունքն է միայն որ պէտք է ընթանի փառքը, հպարտութիւնը կազմէ:

22. Խեղացի լինելուդ համար մի՛ հպարտանաւ

Փոքրիկ Լուիզ, ի՞նչ ըրիր խեղացի ծնելու համար: Եթէ Աստուած, եթէ բնութիւնը քեզ այդպէս օժտեցին, ասոր համար երջանիկ եղիր ներքնապէս, բայց երբեք մի՛ հպարտանաւ, որովհետեւ իրաւունք չունիս:

Ամէն վայրկեան մի՛ ըսեր. «գիտեմ,—ես հասկցայ,—ես լաւ յիշողութիւն ունիմ,—ես դիւրաւ կը սովորիմ,—ընկերներս ինձ պէս չեն եւն.»: Ոչ, կը տեսնես որ այդ աստիճան հպարտանալու իրաւունք չունիս, որովհետեւ պարագաները քեզ խեղացի եւ լաւ յիշողութեան տէր ըրած են:

Բայց եթէ ստուգիւ խեղացի ես, գիտե՞ս թէ ասով ինչ բան ընել կը պարտաւորիս: Լինիլ հարիւր անգամ առաւել լաւ, հարիւր անգամ առաւել եղբայրասէր, առաքինի քան քեզմէ նուազ օժտուածները, որովհետեւ դու անոնց պէս պիտի չկրնաս քու սխալներուն համար ներողութիւն խնդրել ըսելով. «չգիտէի, չէի հասկցած» որովհետեւ դու շուտ եւ դիւրութեամբ կը սորվիս ինչ

որ կը բացատրեն: Յիշե՛ որ մարդ ո՛րչափ ինելացի լինի, ա՛յնչափ աւելի պարսականութիւն ունի կատարելու:

23. — Զարդարանքիդ համար մի՛ հպարտանար

Երեւակայեցէ՛ք երկիր մը, ուր շատ մարդիկ զանազան ձեւերով խեցիներ կը ժողվեն, թել կը շարեն, մանեակ կը շինեն եւ ապա կը հպարտանան այս զարդարանքով ուրիշներուն առջեւ քալելով: Դուք կը խնդաք ու կ'ըսէք. «վայրենիները միայն այդպէս բան կ'ընեն»:

Այս յիմարութիւնը միայն վայրենիները կրնան ընել: Փոքրիկ աղջիկներ կան, որ շատ կը հպարտանան իրենց ականջներուն, մատներուն եւ դաստակներու վրայ կրել մետաղ մը, որ ուրիշ արժանիք չունի, բայց եթէ հագուագիւտ եւ փայլուն լինելը: Աղջիկներ կան որ մեծ ուրախութիւն կ'զգան այսինչ գոյնով կտորէ զգեստ հագած լինելնուն համար, կամ թէ այն ինչ գոյնով եւ իրենց գլխարկը փայլուն գոյն ժապաւէնի կտորով մը զարդարած լինելուն համար: Երբ այսպէս հագուած են իրենց ընկերակիցներուն մէջէն այնպէս հպարտութեամբ կ'անցնին ինչպէս վայրենիները իրենց խեցիէ մանեակով կ'անցնին իրենց նմաններուն առջեւէն:

Ի՛նչ յիմարութիւն. ի՞նչ արժանիք ունիք այս կամ այն ձեւով հագուած լինելնուդ համար: Միթէ՞ ձեր հագուածը, ձեր զարդարանքը զձեզ կը ներկայացնէ: Միթէ՞ ձեր առաքինութիւններէն, ձեր լաւ յատկութիւններէն մէկն է: Զեր զարդարանքին մէջ ունայնամիտ մի լինիք: Հագուած մը աւելի գեղեցկացնելու միայն մէկ միջոց մը կայ՝ այն է մոռնալ հագածը:

24. — Յասմիկ, Շուշան

Յասմիկ շատ կը հպարտանայ իր ընտանիքին պատուաւորութեան համար: Անդադար կը կրկնէ. «Մեր ընտանիքին անդամները պատուաւոր են: Ոչ ոք գէշ բան մը ըրած է»: Անոր այսպէս խօսած ժամանակ իր փոքր ընկերներէն մէկը գլուխը կը կախէ աչքերը արտասուքով լի: Այն Շուշանն է:

Շուշանը վիշտ ունի: Ուրովհետեւ շատ առաջ իր ազգականներէն մէկը յանցանք մը գործած է, դատապարտուած է եւ իրեններէն հեռու մեռած է: Բայց գիւղին մէջ ամէն ոք գիտէ այս պատմութիւնը, եւ քանի մը չար մարդիկ կան, որ շին ուղեր Շուշանին հօրը եւ մօրը յաճախել, որովհետեւ ընտանիքին մէջ յանցաւոր մը եղած է:

Խեղճ պզտիկ Շուշան... եւ սակայն նա շատ անմեղ է այս բաներուն մէջ, անիրաւութիւնն չի՞ լինիր այս բանին համար զինք նեղել:

Տղաք, երբ դուք ձեր ծնողքին պատուաւորութեան եւ առաքինութեան վրայ բարձրաձայն կը խօսիք զգուշացէք ձեզմէ նուազ երջանիկ փոքր ընկերնիդ չնուաստացնել: Դպրոցի մէջ դուք բազմաթիւ էք, կրնայ պատահիլ որ ձեր մէջէն մէկը Շուշանի դրութեան մէջ գտնուի, խնայեցէք անոր կարմրցնելու իր ընտանիքին համար: Ձեր ծնողքին համար ունեցած հիացումնիդ թող առիթ չդառնայ ձեր ընկերներէն մին վշտացնելու:

25. — Քմահաճոյքով մի՛ առաջնորդուիր

Քմահաճոյքով մի՛ առաջնորդուիր, երբ պարտականութիւն մը ստանձնած ես, մինչեւ վերջը տար. մի՛ թողուր դայն ուրիշ մը սկսելու համար: Երբ դաս մը կը սովորիս լաւ գիտնալէ յետոյ միայն ուրիշի մը անցիր: Երբ կար մը սկսար, մի թողուր կիսասեղով (քօշէով) գործելու համար, եւ այս ալ թողուր՝ գուլպայ հրահել կամ ասեղնագործութիւն ընելու համար:

Առանց յարատեւութեան ոչ մի նպատակի կարելի է հասնիլ եւ քմահաճոյքը յարատեւութեան հակառակն է:

Նոյն իսկ խաղիդ մէջ յարատեւ եղիր, եթէ կ'ուզես անոր ամբողջ հաճոյքը վայելել: Ամէն վայրկեան խաղը փոխել, ինչպէս կ'ընեն չար տղաք, զբօսնուլ գիտնալ ըսել չէ. այսպէսով կը ձանձրանան, կը յոգնին, կը տաղտկանան արձակուրդ կամ զբօսանք ունենալէն:


Երբ փոքրիկ բարեկամ մը ունիս, երկար ժամանակ բարեկամութիւնդ պահէ: Մի՛ ըսեր. « Անցեալ շաբաթ այս ինչն էր բարեկամս, այժմ իմ բարեկամս մէկ ուրիշն է: » Որովհետեւ կատարեալ բարեկամ չես ունենար երբ օր մը՝ ասոր կը յարիս, օր մը անոր: Քմահաճոյքը մեր սիրտն ու մեր միտքը անընդունակ կը դարձնեն լուրջ զգացումի եւ ճշակի:

Քմահաճոյքը թշնամի է ընտանեկան խաղաղ երջանկութեան:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ



ԿԱՅԾ ՄԸ ՈՐ ԱՇԽՍՐՀԻՍ ՇՐՋԱՆԸ Կ'ԸՆԷ

Ահաւասիկ նաւ մը ովկէանոսին վրայ մշուշին մէջ կորսուած է, ալեծածան ծովը ամէն վայրկեան կ'սպառնայ զայն խուժի մը վրայ փշրել կամ ծովեզերքի մը վրայ խորտակել: Չկայ փարոս մը որուն լոյսը որքան ալ զօրաւոր ըլլայ՝ կարենայ թափանցել այդ խիտ մշուշին մէջէն, չկայ գործիք մը որու հանած ազմուկը կարելի ըլլայ լսել ալիքներուն խլացուցիչ չփռտութիւն մէջէն: Ի՞նչ ընել: — Նաւապետին խուցին մէջ պահուած գործիքէն կայծ մը կը փայլի, յետոյ ուրիշ մը, յետոյ երրորդ մը, քանի մը վայրկեան ետքը միեւնոյն սենեակին մէջ հեռագրական սովորական գործիքի մը կապոյտ թուղթէ երկրին վրայ նշաններ կ'արձանագրուին: Մօրսի այրուբենն է որ շատ դիւրաւ կը կարդացուի:

Ո՞ւրկից եկաւ այս լուրը որ երկնքէն ինկած կը թուի: Հարցուցէք նաւապետին սենեակէն մեկնող ելեքտրական կայծին, որ մշուշին ու փոթորիկին մէջէն սուրալով 2 - 300 քիլօմէթր հեռուն նաւահանգիստի մը կամ կայանի մը մէջ դրուած նման գործիք մը արթնցուց և անկէ պատասխան մը բերաւ վտանգի տակ գտնուող նաւուն:


Ուր անգամ աշխարհիս օրջանը մեկ երկվայրեկեանի մէջ

Այս հրաշալի գիտութիւնը հիմնուած է «թրթռացումներու» շարժումին սկզբունքին վրայ՝ որ ամէն վայրկեան մեր աչքին ու ականջին վրայ կ'ազդեն:

Հանդարտ ջուրի աւազանի մը մէջ քար մը նետեցէք. ինկած տեղը բոլորակաձեւ ալիքներ յառաջ կուգան որոնք երթալով կը լայնանան, կ'ընդարձակին և կուգան էզերքին կը վարնուին: Եթէ այս ալիքներէն, ջուրի «թրթռացումներէն» մէկուն ճամբուն վրայ պզտիկ փայտի կտոր մը գտնուի այս ծփուն առարկան պիտի տատանի՝ իւրացնելով ալիքներուն թրթռացումին մէկ մասը: Այս ձեւ ալիքներով է որ ձայնն ու լոյսը կը յառաջանան եւ մեր ականջներուն եւ աչքերուն կը զարնուին անոնց վրայ ազդելով:

Ելեքտրական կայծն ալ թրթռացող շարժումներ յառաջ կը բերէ, և այս ալիքները, որոնք անհաշուելի արագութեամբ մը մէկ երկվայրկեանի մէջ աշխարհիս շրջանը 8 անգամ կը կատարեն անթել հեռագրին հոգին են:

Վերի նաւուն օրինակին մէջ ելեքտրական գործիքի մը (Ռումֆորթի կարծառ) միջոցաւ երկու պղինձէ գունտերուն միջեւ յառաջ եկած կայծը՝ ելեքտրական ալիքի մը, թրթռացումի մը ծընունդ կուտայ. այս ալիքը՝ նաւուն կայմին ծայրը հանուելով մետաղեայ թելերու միջոցաւ՝ անկէ կը ցլանայ միջոցին մէջ. եւ շանթի կայծակէն աւելի արագ կը հասնի ծովեզերք ուր կը հանդիպի ուրիշ կայմի մը գագաթին և անկէ վար սահելով կ'երթայ չարժման մէջ կը դնէ նաւուն մէջի գտնուածին նման գործիք մը՝ Սովորական հեռագրաթելի լուրերու ընկալուչ մը այս գործիքին



հետ յարաբերութեան մէջ է եւ անոր ազդեցութեամբ կը գործէ. ամէն անգամ որ ելեքտրական ալիք մը ներս կը մտնէ, հեռագրական ընկալուչին կապոյտ թուղթէ երիզին վրայ կէտ մը կը նշանակուի, երբ ալիքը քիչ մը երկայն է՝ կէտին տեղ գիծ մը կ'արձանագրուի: Աւելերդ չէ թոել թէ այդ կէտերն ու գիծերը կը համապատասխանեն մէյմէի գիրերու. օրինակի համար, կէտ մը եւ գիծ մը կը նշանակեն ա գիրը, գիծ մը եւ երեք կէտ՝ Բ գիրը, գիծ մը եւ երկու կէտ՝ Վ գիրը, եւայլն:

ԳԻՆՏԻՆ ԲԱՆԱԿԻՆ

Կը մնայ գիտնալ թէ այս թրթռացումները, ելեքտրական ալիքները ի՞նչպէս կրնան արձանագրել Մօրսի այբուբենի կէտերն ու գիծերը: Թղթէ կապոյտ երիզին վրայ կէտ ու զի՞ծ նշանակող սլաքը շարժման մէջ դնող ելեքտրական բարդերու թելին վրայ կը գտնուի պզտիկ՝ 2 միլիմէթր տրամագծով խողովակ մը, ասիկա է որ կը բանայ ու կը գոցէ ելեքտրական հոսանքը եւ թուղթին վրայ ալ նշանները կ'արձանագրուին:

Այս ապակեայ պզտիկ խողովակին մէջ՝ երկու միոցներու միջեւ ճնշուած կը գտնուի երկաթի ամենանուրբ փոշի: Իր բնական վիճակին մէջ սոյն փոշին՝ ելեքտրական հոսանքին անցնելուն ամենամեծ դիմադրութիւն կ'ընէ. բայց երբ ելեքտրական ալիք մը ինչայ իր վրայ՝ անմիջապէս խիստ հաղորդիչ կը դառնայ ելեքտրականութեան. ալիքը անցնելուն՝ թեթեւ հարուած մը տրուելուն պէս՝ փոշին նորէն գոցուած կը մնայ ամէն հոսանքի: Արդ, ապակեայ այս խողովակը եթէ թելով մը կապենք կայմին ծայրին որ ելեքտրական ալիքները կ'ընդունի, կ'ունենանք աչք մը — ելեքտրական աչք մը, որ փոփոխակի կը բացուի ու կը գոցուի, ամէն անգամ որ ալիք մը գայ: Եւ փոխն ի փոխը բանալով ու գոցելով բարդերուն հոսանքը, թուղթին վրայ կ'արձանագրէ հեռագրական այբուբենի նշանները:

ԳԻՆՏԻՆ ԱԼԻԳՐԵՆԵՐ

Առաջին անգամ, 1890ին, երկաթի փոշի պարունակող խողովակը գտաւ՝ Պրանլի Ֆրանսացի գիտունը: Քանի մը տարի վերջ Քրոնշդաուտի մէջ ռուս բւօֆէսէօր մը, Բօրօֆ, այս խողովակին միջոցաւ ձեռնարկեց արձանագրել կայծակներն ու մթնոլորտի ելեքտրական երեւոյթներն, եւ յաջողեցաւ ալ. ասոր վրայ, տեսնելով որ կրնայ կայծակի մը ներկայութիւնը արձանագրել, միտքը դրաւ փորձել կատարել հեռուէն գործիքի մը արձակած ալիքն ալ արձանագրել ու այսպէսով հաղորդակցիլ այդ կէտին հետ:

Երիտասարդ գիտուն մը Կիյօմ Մարքօնի, որ այն ատեն քսան տարու հապիւ կար, ամփոփելով՝ առանց հեռագրաթելի հաղորդակցութեան վրայ եղած բոլոր փորձերը՝ առաջին գործիքները հաստատեց եւ յաջողեցաւ Պօլօնի ու Կրիֆօնի միջեւ հաղորդակցութիւն մը փոխանակել: Մեր պատկերը կը ներկայացնէ այդ գործիքներէ մին:

ԶԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏԱՎԻԻ ԿՆՔԱՄԱՅՐԸ

Տավի աղքատ էր, կամ աւելի ճիշդը՝ իր ծնողքը աղքատ էին ինչ որ նոյն բանը բսել է, քանի որ անոնցմէ բան մը ուղած աւտենը, նոյն իսկ զմեւի մը համար յանդիմանութիւն կը լսէր:

Պզտիկ Ամերիկացի մը չի կրնար աղքատ մնալ առանց հարցնելու թէ ինչպէս մարդ կ'ազատի չքաւորութենէ: Դպրոցի մատենադարանէն առած գիրքերուն մէջ, Տավի միջոց մը կարդացած էր հարստանալու. փողոցները պօռալով լրագիր ծախել, ասանկ ընող աղաքները, կարդացած էր ինք, իրենց մօրը օգնելու բաւական դրամ կը շահին, օր մըն ալ կառքի մը տակ ճգնուելու վրայ եղող աղջիկ մը կ'ազատեն. միշտ փոքրիկ հարուստ աղջիկ մըն է որ կ'իյնայ կառքերուն տակ, և մետաքսեայ շրջագոյնով տիկին մը՝ իր զաւակը ազատող լրագրավաճառը պաշտպանութեանը տակ կ'առնէ, քօլէժ կը զրկէ զայն կրթութեամբ համար, եւ երբ մեծնայ իրեն փեսայ կ'ընէ: Եւ կամ գողերու վրայ լուր առնել՝ որոնք գիշերանց ծերուկ կալուածատէրի մը տունը պիտի մտնեն, այն ատեն, պզտիկ լրագրավաճառը կը վազէ իմաց տալ հարուստին և անոր հոգեզաւակը կ'ըլլայ:

Բայց եկու տես որ Տավիի բնական գիւղին մէջ հարստանալու ասանկ միջոց մը անհնար էր գտնել, որովհետեւ ոչ կառք կար հոն՝ որպէս զի անիւներուն տակէն աղջիկ մը ազատէր, ոչ ալ հարուստ կալուածատէր՝ գողերու մեքենայութիւն մը երեւան հանելու համար: — Արդ միակ բանաւոր միջոցը որ մնաց Տավիի, պարիկներու դիմելն էր: Մարդու բան չըսաւ իր յոյսերուն նկատմամբ, ու շարաթ օր մը (կէս-օրէ արձակուրդի օր Ամերիկայի մէջ) տուն հասնելով իր նախընթրիքը գրպանին մէջ դրաւ եւ ուղղուեցաւ դէպի անտառ:

Մեծ ծառերուն տակ լուռ ու կէս-մութ էր, գիւղին ժխորները, ոչխարներուն մայիւնը, երկաթագործին մուրճի հարուածներուն ձայնը մինչեւ հոն չէին հասներ: Միայն հովին՝ ներդաշնակ հեծեծանքը կը լսուէր տերեւներուն մէջէն, եւ ատեն ատեն ոստերու շփոխումներ որոնք թունտ կը հանէին Տավին:

Մնաց որ վախկոտ մանչ մը չէր ան. երբ կերաւ վրան կարգ քուտած հացը, երկու կարմրուկ խնձորները. նորէն ճամբայ ելաւ քաջութեամբ: Մեծ արիւթեամբ քալեց ու քալեց, մինչեւ որ իրեն անանկ եկաւ թէ հասած է անտառին ճիշդ մէջտեղը: Շունի մը հաչիւնը ուշաբերեց զինքը, եւ շորս կողմը նայելով տեսաւ սքանչելի տուն մը: Մարմարէ վերնադասութակին

վրայ կեցող այդ շունը՝ մետաղէ էր եւ հաշիւներն աւելի զանգակի մը ձայնին կը նմանէին։ Շատ ուրախ էր իր այնքան երկար ատենէ ի վեր փնտռած տունը գտնելուն, ուստի փութով ցատքեց մետաղէ շունին առջեւէն եւ դուռը զարնելու վրայ էր երբ մէկէն ի մէկ բացուեցաւ ան։ Տափի դիմացը ելաւ պզտիկ անձ մը, թաւիչէ կապոյտ նշանազգեստով։

— Ի՞նչի պէտք ունիք մեզի խուլցնելու չափ զանգակը ուժով զարնելով, ըսաւ ան ճրճրակի պէս հնչող ձայնով մը։

— Օ՛հ, սա մետաղէ շունն է դրան զանգակ կոչածնիդ։

— Անտարակոյս, բայց ի՞նչ կ'ուզէք հիմայ։

— Կը փափաքիմ կնքամայր պարիկս տեսնել։

— Ձեր այցետո՞մար, ըսաւ թզահասակ դռնապանը, ոսկիէ տփսէ մը ներկայացնելով իրեն։

Տափի ստիպուեցաւ խոստովանիլ թէ քառթ շունէր, եւ անունը ըսաւ. դռնապանը վեր գնաց և պահ մը ետքը վերադառնալով ըսաւ տղուն. — Սանդուղէն վեր ելիր եւ դիմացի սրահին դուռնէն ներս մտիր։ Քեզի հետ դալու ժամանակ չունիմ հիմայ։

Տափի հնազանդեցաւ, եւ ինքզինքը դտաւ սենեակի մը մէջ՝ մամուռի պէս կանանչ թաւիչով գորգապատուած եւ ոսկեգորշ թաւչապատ թիկնաթոռներով կահաւորուած։ Տիկին մը կը գըտնուէր հոն, որ Տափի կնքամայրն ըլլալու էր։ Չէ՛ թէ գեղեցիկ գեղեցիկ տիկին մը՝ ճակատը վարդերով ու մարգարիտներով զարդարած՝ այլ փոքրիկ պառաւ մը, սրածայր գլխանոց մը դրած ու հին ոճով հագուած։ Պառաւը ակնոցը պաթիսթէ թաշկինակին սրբելով եւ նորէն քիթը դնելով մատղշուկ մանչուկը դիտեց։

— Դո՞ւն ալ, հարցուց, իմ սաներէս ես։

— Այո, կրկնեց Տափի քիչ մը մտերմութիւնով. ու այն ատեն առաջ նետուեցաւ հարցնելու իր կնքամօրը թէ ինք շա՞տ սաներ ունէր

— Շա՛տ։ Երկու հարիւր երեսունընթո՛ք, ու լա՛ւ կը հաշուեմ։ Բայց դո՛ւք, կարծեմ հանգիստ էք եւ ինծի պէտք չունիք։

Այս դիտողութիւնը քիչ մը շփոթեց Տափին. քանի մը անիմանալի խօսքեր քրթ մնջեց, զոր պառաւ տիկինը գուշակեց իր ստացած փորձառութեան շնորհիւ։ «Այո՛, գիտեմ, ըսաւ, դուք Ամերիկացիներդ, ստակ չահիլ կ'ուզէք ու հարստանալ, ժամացոյցներ ու պիսիքէզներ ունենալ և զարմացնել ձեր ընկերները։ Տեսնե՞ք, ի՞նչ կը փափաքիք որ ձեզի պարգեւեմ. ստա՞կ, շատ մը ստա՞կ, թէ ոչ անանկ առարկայ մը որով ապագային կարող ըլլաք թէ՛ դրամ եւ թէ համբաւ չահիլ։

Տավի զանի դիտեց չփոթած դէմքով մը . լաւ չէր հասկնար , Պառաւ կինը զանի մօտակայ սենեակ մը առաջնորդեց ուր մէկ կողմը կոյտերով ոսկի ու թանկագին քարեր կը գտնուէր . ուրիշ կողմ մը դիզուած էին շատ մը զարդի առարկաներ , ժամացոյցներ , հեծանիւներ , եւլն . իսկ դիմացի կողմը կային գրիչներ , մատիտներ , գիրքեր , եւ ուրիշ գործիքներ որոնց ոչ անունը գիտէր Տավի եւ ոչ իսկ տեսած էր անոնք :

— Ահաւասիկ , ըսաւ Պարիկը՝ ցուցնելով ոսկին ու թանկագին իրերը , ասոնք ինքնիրեն կը գործեն , առանց տիրոջը զբաղելուն ձենէ չպիտի խնդրեն ոչ ջանքի , ոչ աշխատութեան ո եւ է մասնակցութիւն : Իսկ ասոնք , յարեց գործիքներուն կողմը դառնալով միայն երկինքէն ընդունուած ձիրքերը արդիւնաւորելու կ'օգնեն : Օրինակի համար , այս գրիչը առնողը գրագէտ մը կ'ըլլայ , այս գիրքն ու կարկինը սրու ու վիճակի անիկա գիտուն մը կ'ըլլայ : Տեսէ՛ք , շարունակեց Պարիկը փայլուն ու չիկորակ մետաղի մը կտորը ցուցնելով Տավիի , ասոր նման կտոր մը տուի ասիէ քառասուն տարի առաջ քու տարիքդ տղու մը . անունը Էտիսըն էր , եւ գիտե՞ս որ այս երկաթին կտորովը շատ մը գիւտեր ըրաւ :

— Գիտեմ , պատասխանեց Տավի , գիտեմ որ խել մը մեքենաներ հնարեց , ինչպէս ձայնագիրը , հեռախօսը . . . Խնդրեմ , տիկին , ինծի ալ գործիք մը տուէք :

— Լաւ ուրեմն , առէք թուղթ ու գրիչ . ասոնցմով խնամք պիտի տանիք դասարանի պարտականութիւններնուդ . ապագային երբ մեծնաք , ձեր ձեռքն է մեծ գրագէտ մը ըլլալը : Հիմա ալ երթաք բարով , ցայգոգին ձեզի կ'առաջնորդէ :

— Ի՞նչ տուաւ ձեզի բարի տիկինը , հարցուց ցայգոգին որ պզտիկ մանջը դուրս կ'առաջնորդէր :

Տավի իր թուղթին թերթերը ցուցուց անոր :

— Սիրուն պարգե՛ւ , աւելցուց ցայգոգին արհամարհանքով , երբ ես առնելու ելայ , ձոյլ ոսկիները ընտրեցի :


— Անոր համար է որ ասանկ դռնապան մնացեր ես , ըսաւ Տավի՝ զանի քամահրելով :



ԱՇԽԱԱՐՀԻՍ ՆՇԱՆԱԻՈՐ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

ՍԱԽՁՐԷՆ ՄԻՆՉՅԻ ՄՆԵՐ ՕՐՆԵՐ

Իսալացի Նկարիչներ



ՅԻԱ ԱՆՃԷԼԻՔՕ

Ֆրա Աճճեկիֆօ. — Ծնած 1387, մեռած՝ Հռոմի մէջ 1455ին :

Պատկեր նկարելը իբր աղօթք մը նկատած է : Միօրինակ բայց հաճելի եւ գրաւիչ գոյներով կտաւին վրայ ծրագրած է հրեշտակներու, սուրբերու, կոյսերու, աննիւթական աշխարհի քաղցր երազանքները, իր երկնային կեանքի ու գեղեցկութեան արտայայտութիւնները հրաշալի է : Նշանաւոր գործերն են՝ Սուրբ Կոյսի հրաշահանդէսը, Աստուածածնի թագադրութիւնը :

Մագաչիօ. — Ծնած Ֆլորանսի շրջականները 1401ին, մեռած 1428ին : Տասն եւ հինգերորդ դարը՝ նկարչութեան մէջ դարագրելու մը ըրած է՝ ձգտելով դէպի սերտուած ու հաշուած ճշմարտութիւնը դէպի ո՛չ-կրօնական նիւթերը՝ զորս սրբազան նիւթերու չափ կատարելագործած է : Ամենափայլուն նկարիչը եղաւ կրօն ու դիւքերու, հովիւ շարժումներու, որոց հետ կրցած էր ընտելանալ ի շնորհս հեռապատկերի նոր արհեստով եւ իր պատկերներուն յատակը կարող եղած է զարդարել հեռուէն տեսնուածի պէս ցուցնող շէնքերով եւ այլ նկարներով :

Ֆիլիբօ Լիբի. — Ծնած է Ֆլորանսի մէջ 1406ին՝ եւ մեռած՝ 1469ին Սրբէթի մէջ : Վերածնող Իտալիոյ նկարիչներէն մին, որ ամէնէն աւելի ջանացած է արուեստը ազատել կրօնականի ճաշակէն եւ ներկայացնել բնութիւնը՝ իր բովանդակ ճշմարտութեամբ : Սովորութիւն ըրած էր իր պատկերները կարեւոր գիւղանկարի յատակի մը վրայ գետեղել եւ այդ սովորութիւնը տարածեց ալ :

Ճիովանի Պելլիցի. — Ծնած է Վենետիկի մէջ 1427ին, մեռած՝ նոյն քաղաքը 1516ին : Այս ատեններն է որ իւղանկարը կը ծանօթանար : Ժան ու Ժանթիլ Պէլլիցի՝ այս նոր գոյներով արուեստը այնքան կատարելութեան հասցուցին որ որմնանկարը կորսնցուց իր բոլոր կարեւորութիւնը : Ճիովանիի դպրոցը իր երանգներուն հարստութեամբը շատ սիրուած է :

Մանքեհեա. — Բատուայի մէջ ծնած է 1431ին, եւ մեռած Մանթուայի մէջ 1506ին : Հռոմէական աշխարհի վեհ երազանքով

սնած է եւ զայն ներկայացուցած չոր ու անկենդան գոյներով, բայց գեղեցիկ դիրքով կազմուած խումբերու ձեւին տակ, և անանկ մարդասիրական ազնիւ զգացումով մը տողորուած զօրաւոր երեւակայութիւն մը միայն կրնայ յղանալ: Նոյնպէս նշանաւոր փորագրիչ մը եղած է:

Պօթիչէլլի. —



Պօթիչէլլի

— Ծնած է Ֆլորանսի մէջ 1447ին, մեռած՝ Հռոմի մէջ 1510ին: Իր վարպետին՝ Ֆիլիբո Լիբիի՝ իրեն նկարներուն մէջ ունեցած հայեցական ու ինքնամփոփ պատկերներու գեղը շատ աւելի շեշտեց իր ձեռքէն ելած նկարներուն մէջ եւ մինչեւ իսկ տըրբութեան արտայայտումին հասցուց այդ զգացումը: Նրբացած գաղափարականի շունչ մը կ'ողբելորէ Պօթիչէլլի երազանքը եւ սաւառնի անոր նկարներուն վրայ, թէ եւ գիծերը շատ գելած ըլլան: (Դործերը Ս. Կոյոն ու Յիսուս Մանուկը, Մոգերու երկրպագութիւնը եւայլն):

Լը Բեռուփին. — Ծնած 1446ին Բասթէլլօ տէլլա Բիէդէի մէջ և մեռած Բասթէլլօ Փօնթինեանօի մէջ 1523ին: Ռաֆայէլէ աւելի քիչ ձկուն եւ նուազ անպաճոյճ: ամէնէն աւելի իր երազանքն եղած է՝ մարդկային խորհուն գլուխներ, նրբաճաշակ մարմիններ՝ համեստօրէն ծածկուած՝ իր նկարները խիստ հաճելի տեսք մը ունին գոյներու մասին, երանգները թեթեւ ու ներդաշնակ են:

Թարգմ.

Չ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԹՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարվըրտ համալսարանի բրոֆէսէօններէն մին գտած է հետեւեալ Խուս բանական ցուցակները, որոնք հետաքրքրաշարժ ըլլալէ աւելի շահեկան են, քանի որ մինչեւ հիմա չեն տեսնուած ո եւ է բազմապատկուծեան աղիւսակի մէջ:

Բազմապատկութեամբ ստեղծուած ցուցակներ

- 1 անգամ 9 առաւել 2 հաւասար է 11
- 12 անգամ 9 առաւել 3 հաւասար է 111
- 123 անգամ 9 առաւել 4 հաւասար է 1111
- 1234 անգամ 9 առաւել 5 հաւասար է 11111
- 12345 անգամ 9 առաւել 6 հաւասար է 111111
- 123456 անգամ 9 առաւել 7 հաւասար է 1111111
- 1234567 անգամ 9 առաւել 8 հաւասար է 11111111
- 12345678 անգամ 9 առաւել 9 հաւասար է 111111111

1 անգամ 8 առաւել 1 հաւասար է 9
 12 անգամ 8 առաւել 2 հաւասար է 98
 123 անգամ 8 առաւել 3 հաւասար է 987
 1234 անգամ 8 առաւել 4 հաւասար է 9876
 12345 անգամ 8 առաւել 5 հաւասար է 98765
 123456 անգամ 8 առաւել 6 հաւասար է 987654
 1234567 անգամ 8 առաւել 7 հաւասար է 9876543
 12345678 անգամ 8 առաւել 8 հաւասար է 98765432
 113456789 անգամ 8 առաւել 9 հաւասար է 987654321

123456789	անգամ	9	առաւել	10	հաւասար է	1111111111
123456789	»	18	»	20	»	2222222222
123456789	»	27	»	30	»	3333333333
123456789	»	36	»	40	»	4444444444
123456789	»	45	»	50	»	5555555555
123456789	»	54	»	60	»	6666666666
123456789	»	63	»	70	»	7777777777
123456789	»	72	»	80	»	8888888888
123456889	»	81	»	90	»	9999999999


Այս ցուցակն ալ աւելի շահեկան հանգամանք մը կ'ունենայ, երբ ուշադրութեամբ դիտենք թէ իւրաքանչիւր բազմապատկի, բաժանելի է 9ով, եւ թէ իւրաքանչիւր պատասխանի թուական գումարը եմէ աւելցուած թիւէն հանենք 0 կը մնայ Օրինակի համար 1,111,111,111 ի գումարը հաւասար է տասնի, 10 նուազ 10, հաւասար է 0:

987654321	անգամ	9	հաւասար է	888888889
988654321	»	18	»	177777778
987654321	»	27	»	266666667
987654321	»	36	»	355555556
987654321	»	45	»	444444445
987654321	»	54	»	533333334
987654321	»	63	»	622222223
987654321	»	72	»	711111112
987654321	»	81	»	800000001

Այս ցուցակին մէջ ալ ուշադրութեան արժանի կէտերը սա է թէ բազմապատկիչ թիւերը իրենց արտադրեալներուն ծայրերը դրուած են. օրինակի համար երկրորդ կարգին բազմապատկիչը 16 է եւ աս իր արտադրեալը եղող 77,777,777 ին երկու կողմը դրուած է:

ՀԱՆԵԼՈՒԿԼԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄ

Թիւ 1. — Ահա՛ որսորդն ու իր շունը, բայց ո՞ւր է նապաստակը:




ԼՈՒԾՈՒՄ. — Նապաստակը կը գտնուի որսորդին ետին, երկու ծառերուն մէջտեղ, գլուխն ու երկու ձառքերն դէպի վեր եւ ետեւի ոտքերն զետնին վրայ, լուծեց. — Սարգիս Ղազարոսեան (Իզմիտ). — Ա. Տ. Պօղոսեան (Խարբերդ):

Թիւ 3. — Դպրոցական տղաքները թուղթէ քառակուսի մը ծալելով նաւակ մը, յետոյ ձի կը շինեն: ճիշդ նոյն ծալքն է սոյն խնդիրին լուծումն ալ, որուն պատկերը հոս կը դնենք:

ԼՈՒԾԵՅԻՆ. — Ա. Յարութիւնեան եւ Յարութիւն Օհանեան Գօնիա:

ԳԻՏԱԿԱՆ ՁԲՕՍԱՆՔ



Ե. ՉԳԼՅԱՆԻ ԺԱՄԸ

Ամառ օր մը դաշտին մէջ կը գտնուէր եւ կ'ո գէք գիտնալ թէ ժամը քանի՞ն է. Ատկէ դիւրին ի՞նչ կայ. Ձեռքերնիդ զրպաննիդ կը տանիք, ժամացոյցնիդ կը հանէք եւ . . . հապա եթէ ժամացոյց չկայ զրպանին մէջ. . . :

Մի՛ շփոթիք. ծախ ձեռքերնիդ վրանիդ է, շատ ալ դիւրին է յարդի շիւղ մը գտնել. այս երկուքը կը բաւեն ժամը գիտնալու. Ահա թէ ի՞նչպէս:

Ծախ ձեռքերնիդ բացէք ու հորիզոնական դիրքով տարածեցէք, ափին մէջը դէպ ի վեր դարձած, եւ մատները ուղիղ ու իրար կպած: Առէք յարդի երկար շիւղ մը եւ զետեղեցէք ուղղահայեաց կերպով այն անկիւնին խորը, զոր բռնամատը կը կազմէ ցուցամատին հետ:

Կռնակնիդ արեւին դարձուցէք եւ ծախ ձեռքերնիդ անանկ մը բռնեցէք որ բռնամատին շուքը՝ ափին մէջտեղի զիծին հասնի մինչեւ: Այն ատեն յարդի շիւղին շուքը ո՛ր մատին վրայ որ իյնայ՝ ժամը կը ցուցնէ: Ահա պզտիկ ցուցակ մը. երբ շուքը ցուցամատին ծայրին վրայ է, ժամը առտուան տասնըմէկն է. (կէս օրը ժամը ճիշդ 6 սեպելով) միջնամատին ծայրը՝ առտուն 12ը կամ իրիկուան 12ը, մատնեմատին ծայրը, առտուն 1ը կամ իրիկուան 11ը՝ պզտիկ մատին ծայրը՝ առտուան 2ը կամ իրիկուան 10ը. նոյն պզտիկ մատին երկրորդ յօդաւորումին վրայ՝ առտուան 4ը կամ իրիկուան 8ը. նոյն մատին ճիշդ արմատը՝ առտուան 5ը կամ իրիկուան 7ը. իսկ երբ շուքը ափին մէջ կ'իյնայ առանց մատերուն դպչելու՝ կէս օր եղած է:

Ձեռք ըսեր թէ այս ժամացոյցը՝ զրպանի « Բրոնզով » Թափաղին ժամացոյցներու պէս վայրկեանը վայրկեանին ժամը կը ցուցնէ, բայց կարծեմ, դաշտին մէջ, պտոյտի պահուն, վեր ի վերոյ ժամանակը գիտնալը կը բաւէ:

ԻՄԲԱԴՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԿԻԶ — ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, թիւ 38, Իզտամ լրագրին դէմ

102478505

102478505

102478505

102478505

102478505

102478505

102478505

102478505

102478505

102478505

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՐԱԹԱԿԱՆ

ՈՐ

ՔԱՂԱՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

Նոր ապրիլէն սկսեալ Հանրագիտակ հը հրատարակեալ չարա-
թական 2024 էջ, բազկացեալ եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը
պիտի յատկացուի Առաջնորդ վարժապետներէն 24 էջ:

Վեցամեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆԷ

Պաշտայ համար

30 դրուշ

Գրառաց

35 »

Պրոտաստան

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ Վանապետանցի 12 տեսչը զոս անկել ուզողը պիտի
է վճարէ 12 դրուշ:

Բանի մը տեղերէն ուր Գործակալ չունինք, հը հարցնեն թէ
Հանրագիտակի քաժներդինք եւ կամ մանր յանձնարարութիւններու
փոխարժէքը ինչպէ՞ս զրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է ծաւ. նամակագրոշմ դնել նամա-
կին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (րպիսիքս ընել), նամակա-
գրոշմ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհե-
տ եւմեր ձեռքը չհասած Ժամանակ, երբէք պատուիրանատու չենք:

Հատը 30 փարայ

ՉԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԱՅՅԱՐԱՐԴԵՐՈՒ

ՈՐՈՇԵԱԿ ԳԻՆԵՐԸ

Մէկ լեզուէ միջակ թուղթ 400 հատը 7 ղ:

Երբէ » » » » » 9 »

Երեք » » » » » 11 »

Մէկ » ընտիր » » » 8 »

Երկու » » » » » 10 »

Երեք » » » » » 12 »

Ոսկեղօծ եզերքներով ընտիր թուղթ 16 »

» » գունաւոր » 17 »

» թրթրեղ եզերք ձերմակ » 17 »

» » գունաւոր » 18 »

Թուրքերէն Սիւլիս, Թաալիւք եւ Բրգգա
գրով փորագրեալ այցաքարդերուն համար
12 ղըշ: աւելի ծախք մը վճարել պէտք է:

Լուսանկարով միանին տպագրեալ այցա-
քարդերուն 400 հատը 60 ղըշ:

Գաւազմիկէ եղած յանձնարարութեանց
համար թղթատարի ծախք չի պահանջուիր:
Վճարմունք կանխիկ չենք: